

ՍԷՐ ԵՒ ԵՐԿԻՒՂ ՕՐԻՆԱՅ

Երկու ճամբով հնար է յորդորել կամ ձգել զմարդ 'ի կատարումն պարտուց իւրոց և 'ի պահպանութիւն օրինաց: Մէկն է կամակար յօժարութիւնն, որով մարդ առանց բռնադատութեան սիրով և հաւատարմութեամբ կը կատարէ իր պարտոցը: Միւսն ալ է երկիւղ պատժոյ, որ կը ստիպէ զստամբ բակն՝ փութալ 'ի կատարումն նոցին: Այս երկու զօրութեանց կամ սկզբանց միոյն կամ միւսոյն աւելի կամ նուազ ընկերութեան մը մէջ զօրանալը, նոյն ընկերութեան բարոյական կենաց աւելի կամ նուազ զօրաւոր ու հաստատուն ըլլալուն նշանն է: Վասն զի թէ որ կամքն է որ յօժարութեամբ կ'առնէ իր իրական պարտուց մեք, բնէ է թէ կը սիրեմք զառաքինութիւն և զարդարութիւն, և կը զգուիմք ու կը խորշիմք 'ի չարութենէ և յանիրաւութենէ. և բարւոյ սէրն է որ տայ մեզ գործել ուղղակի զբարին, առանց մեր կողմանէ դժուարութեան պատահելու:

Բայց ընդհակառակն թէ որ մէկը միայն յերկիւղէ պատժոյն զգուշանայ յապիրատութենէ, և փութայ բռնութեամբ 'ի իրումն սեփական պարտուցն, շատ դժուարին է որ օր մը չգործէ զչար, առ ոտն չհարկանէ իր սեփական պարտքերը, և չանիրաւի ընկերոյր վասն զի պատժոյ երկիւղը՝ թէպէտ կրնայ սանձ մ'ըլլալ ընդդէմ ապիրատութեան, բայց առ ժամանակ մի է այս ինչ պարագայից մէջ, և չի կրնար փոխել 'ի հիմանց դէպ 'ի չարն հակափոխալ բնութիւն մը: Պատժոյ երկիւղն այսպէս խօսեցնել կու տայ եղծաբարոյ մարդոյ 'ի ներքուստ: Ո՛հ, հրչափ զուարճալի բան է գողնալ զինչ օտարին, և կեալ պարագորդ ու անաշխատ կենօք: Բայց թէ որ գործեմ զայն և յանկարծ յայտնուիմ, թիոյ ծառայութեան կը դատապարտուիմ: ուրեմն

լաւ է զգուշանալ բանտ չի մտնելու համար:

Եւ եթէ հասնի որ այս կէտս թերադրութեամբ խղճի մտացն, քայլ մը միայն կը պակասի այնպիսոյն՝ գործել և ամենաժանր եղեւն և ոճրագործութիւն. պատիժն և յայտնուիլն է միայն որ կը վախցնէ և կ'արգելու զայնպիսին 'ի չարէն: Ուրեմն պատժոյ երկիւղը տկար է առ 'ի ուղղել մարդոյս դէպ 'ի չարն հակամոտեալ բնութիւնը: ուրիշ զօրութիւն չունի, բայց եթէ առ ժամն արգելուլ զնա և տալ նմա կեղծաւորել. իսկ հաստատուն առաքինութիւն և ուղիղ խղճմրտանք կազմելու համար բոլորովին անբաւական է:

Այս ճշմարտութիւնն այնպէս քաջայայտ է, որ անշուշտ ոչ որ կը համարձակի ընդ երկբայութեամբ արկանել. որուն զօրաւոր ապացոյց մ'է այն ընդհանուր համաշխարհի գոյիւնն որ կ'աղաղակէ կրթութիւն և դաստիարակութիւն ժողովրդեան. դարձեալ և այն փոյթն՝ որով ամեն մարդասէր և հայրենասէր անձն կը ջանայ տնկել և աճեցնել մարդոյ արտին մէջ զգացումն եղբայրակցութեան, կամ որ նոյն է բնէ մարդասիրութեան (philanthropie): Բայց գիտնալու է որ մեր դարն ու ժամանակն բազում և մեծամեծ մտացածին ցնորից և պատրանայ նշաւակ եղած է, և չեմք սխալիք եթէ ըսեմք որ ասոնցմէ շատերն իրենց ծագումն և ոյժը մարդասիրութեան յամեն ազնուական զգածմանց առած են: Կը սխալին 'ի միջոցս, ինչպէս կը սխալին սովորաբար և 'ի հիմնական սկզբունս: Բայց ասով չեմք ուղեր բսել որ իրենց վախճանին ու նպատակին մէջ գովելու մասեր չունենան:

Բայց այն անձինք որ չեն ախորժիր երևակայական ու վերացեալ գաղափարով գոհ ըլլալ, պէտք չէ որ շատանան գործոյն արտաքին երևութով: Մենք հօս ուրիշ բան չեմք տեսներ՝ բայց եթէ մարդասիրութիւն ըսուած սկզբան անհիմն անպատեհութիւններ: Ախտն և թշուառութիւնն՝ որ սո-

վորաբար անբաժան են 'ի միմեանց, օր քան զօր կը տարածուին 'ի վերայ երկրի. որոց հետ կը շատնայ և յանցաւորութեանց թիւն և կը լեցուին բանտերն եղեւնագործ մարդիկներով, Ուստի կը հարցընեմք անոնց որ 'ի պաշտօնէ բանտերը մտնելու ստիպեալ ըլլալով՝ առիթ ունին ճանչնալու 'ի մտանց այն թշուառքը, և պատմեն մեզի անոնց բարոյական կենաց խեղճութիւնքը, որք ընկզմեալ և թաթաղեալ են յազգի ազգի ոճիրս և անօրէնութիւնս:

Այժմեան քաղաքագիտութիւնն հասարակեաց թէ դատաստանաց հրատարակութիւնը ժողովրդեան բարոյականութեան դպրոց կրնայ ըլլալ, ուր կը սորվի չարագործին դժբախտ վախճանը և կը խորշի անոր նմանելէն. ընդունայն ակնկալութիւն: Ժողովրդեան առաքելի և կրօնասէր մասը, որ կը ջանայ իր օրական հացն օրինաւոր վաստակով գտնել, պարապ ժամանակ չի կրնար անցընել ներկայ և ունկնդիր ըլլալով դատաստանաց և վճռոց. և ոչ իսկ փոյթ կ'ընէ. վասն զի խղճմբտանքն կը սորվեցնէ իրեն թէ ինչ ճամբայ պիտի բռնէ առաքելի ըլլալու համար: Ո՛վ կ'երթայ ուրեմն հօն առ 'ի ժամակորոյս լինել. անգործք, այսինքն ախտաւորք, վասն զի գատարկութիւնը մայր է ամենայն ախտից: Եւ ինչ կը սորվին հօն անոնք, զորս մանաւանդ միւրք անուանելու է ընկերութեան. ոչ այլ ինչ, բայց եթէ աւելի ևս կրթել իրենց չարութիւնն և հաստատուիլ յապականութեան: Եւ միթէ կարելի է որ բարուք ապականեալ մարդիկ աւելի ևս չապականին, լսելով ընկերական ամեն տեսակ վէրքերն և չարութեան ամեն ազգի ազգի հնարքները:

Ուրեմն այս կերպով քաղաքագէտք իրենց նպատակին չեն հասնիր. որովհետեւ լաւաբարոյ անձանց օգուտ չեն ընէր, վասն զի հօն ներկայ չեն. իսկ նոյնպիսի եղեւնամբ ապականեալ անձանց առջին ալ անբարոյականութեան դպրոց մը կը բանան: Բայց ասով ըսել չեմք ուզեր որ արդարութիւնը հասա-

րակաց երաշխաւորութիւն չունենայ. քաւ լիցի. միայն կ'ուզեմք ցոյցընել այն սխալն որ տարածուած է ամեն ուրեք, իբր թէ դատաստանաց հրապարակութիւնը ժողովրդեան բարոյականացուցիչ միջոց մ'ըլլայ:

Ինչ որ ըսինք պատժական տրդարութեան հրապարակութեան նկատմամբ, նոյնը կը կրկնեմք և ուրիշ միջոցաց համար, զորս կը թելադրեն մարդասիրութեան սկզբունք: Գոյեիլք են յինքեանս, բայց անգործ և անբաւականք և բազում անգամ անկարողք: Եւ ասոր պատճառն այն է՝ որ մարդկային խօսքն որչափ ալ ներշնչեալ ըլլայ 'ի բարձր զգացմանց, ոչինչ կամ այնպիսի քիչ ազդեցութիւն ունի լսողին վրայ, որ գոզցես ամենեկին տպաւորութիւն չընէր: Պէտք է ինչնէ մինչև յաթոռ անդր խղճմբտանաց մարդոյ, թափանցել 'ի ներքս, և կրթել այն հակամիտութիւններն որք կը տիրեն անպանօր. վասն որոյ մարդոյ բարոյականին վրայ փոփոխութիւն մ'ընելու համար, կարևոր են զօրաւոր միջոցք, որպէս զի կարենան յաղթել նոյն իսկ և ընդդիմակացութեանց կամաց՝ որ կը հակէ զմեզ 'ի չարն:

Բնութեան և մարդկութեան միաձայն հաստատութիւնը կ'ուսուցանէ մեզ միտք միջոց մը բաւական առ այն. առնք կը վկայեն և կը խոստովանեն որ մարդոյ խղճմբտանաց վրայ ծայրագոյն աստիճանի զօրաւոր ազդեցութիւն ունեցողը կրօնքն է, ուսկից զուրկ է մարդկային պարզ կրթութիւնը:

Թէպէտ աշխարհի համար սուտ կրօնքէ աւելի փնտաւոր հարու աղետալի բան չի կրնար ըլլալ, բայց ո՛ր և է կրօնք որչափ անտեղի և անհիմն ալ ըլլայ, կը գեղու իր հետևողաց սրտին մէջ այս օգտակար վարդապետութիւնը, թէ՛ Աստուած գիտէ մեր ամեն խորհուրդները, և թէ պիտի դատէ մեր կամաց ամեն գործերը՝ վարձատրելով կամ պատժելով ըստ որում բարի կամ չար, արդար կամ անարդար: Եւ եթէ մարդ յանդգնի խաբել մարդկային դատաս-

տանն ու արդարութիւնը, անպատիժ պիտի չի մնայ, այլ պիտի ինկնայ Աստուծոյ ձեռքը՝ որ վրէժխնդիր է արդարութեան ընդդէմ անիրաւութեան:

Եւ ոչ պայափ միայն. ամեն կրօնք ըստ իր հաւատոցը կը սորվեցնէ գեղեցիկ միջոցներ առ ի ձեռն տալ մարդոյ ջանքը, որպէս զի կարենայ դիւրութեամբ կատարել իր պարտքերը: Իւրաքանչիւր կրօնք ներքին մարդը բարւոյնելու և ուղղելու միջոցներ ունի, որք ի մեզ կոչին շնորհք և խորհուրդք: Հօս չեմք ուզեր այս միջոցաց ներքին զօրութեան ու ճշմարտութեան վրայ խօսիլ. միայն այս բանք որ ընդհանուր համազումը կը ցուցնէ պարզապէս մարդկային միջոցաց անբաւականութիւնն և տկարութիւնը, և թէ յայտնի ու ապացուցեալ է ի փորձոյ՝ որ մարդիկ իրենց պարտքը կատարելու համար հարկ է որ սիրեն զբարին, զճշմարիտն և զարդարը, ճանչնալով որ անզոր անբաւական է պատժոյ երկիրն, և ուրիշ օգուտ չունի՝ բայց եթէ ի կեղծաւորութիւն վարժել զմարդկութիւն:

Կը փափաքեմք որ այս արեւու պէս լուսաւոր վարդապետութեան ու ճշմարտութեան ամենայն դը համոզուի, մանաւանդ անոնք որ կրօնականն ի բաց թողլով՝ քաղաքական ու մարդկային կրթութեան մեծ զօրութիւն կ'ընծայեն: Չեմք ուզեր միշտ և սխալ կրօնք. և կ'ըսեմք որ ամեն սխալանաց մէջ՝ որոց մէջ մարթ ի անկանել մարդոյ, ծանրն և ամենապատանգաւորն է հաստատելն թէ աւելորդ են կրօնք, կամ թէ մարդկային ընկերութիւնն այն ատեն կը հասնի ճշմարիտ քաղաքականութեան՝ երբ կործանին կրօնք: Վերջ տանք մեր խօսիցն ըսելով՝ թէ զմարդ ի հնազանդութիւն օրինաց ածելու համար և ի կատարումն պարտուց իւրոց, պէտք է տալաւորել ի սիրտ նորա զէր բարոյ և արդարութեան. և թէ երկիրն՝ զոր դատաստանարանք կրնան ազդել մարդոյ վրայ, ոչինչ կամ ամենաքիչ օգուտ ունի. իսկ բարոյ սէրը կրօնքն միայն կրնայ ազդել ի մեզ:

ՔՐԹԻՆ ՏԻՆՆՈՋ

ԱՔՍՈՐԱԿԱՆԱՅՆ Ի ՍԻՊԵՐԻԱ

ՎԵՊԻ 1

Յայնժամ սկսան շարականք հանդես տան, և եղաւ դիակնն ի դազադս. և ի բրե տանէին զնա, կամեցաւ Նիխաբեթ՝ թէպէտե տկար և դողդոջուն և վհատեալ՝ զնալ զհետ մինչև ի յետին օթեան նորին, որ օգնական, պաշտպան և քաջաբեր լեալ էր իւր, և վստն իւր աղօթելով աւանդեալ զողին: Յաջակողման եղեր փամայ, ի ստորոտ բլրոյն՝ յորոյ վրայ ամբառնան աւերակք դղեկին կառուցելոյ յաւուրս պատեւրագմանց Պատրիարանց, են գերեզմանք Սարաբուլ քաղաքի: Վայրս այս է ի դաշտի մեծի ցանկապատ, ունելով ի միջիփայտակիրտ աղօթարան, և շուրջանակն հօղակոյտը բերելով ի գազաթուն իւրեանց զնան խաչին ի ցոյց դամբանաց: Աստանդ եղեկինք արկաննն ստուերս եղերականս, ի ի ներքուստ վիմաց դամբանականաց բուսեալ կանկաւք վայրենիք լայնատարած և բազմահերձ տերեւովք, և միւս այլ բոյս՝ որոյ ցօղուն մերկ և յերկիր հակամէտ՝ ի ծիւս յօգունս նրբինս ծաւալի զգերեզմանսք, ծաղկունք նորա զեղեւաշորթ գողցես առ ի փթթել զշիրմօք հաստեալք:

Յուդարկաւորք ոչ սակաւք զհետ դազաղացն գնային յայլ և այլ ազգաց, ի Պարուկաց, ի թրքաց և յԱրաբացոց, փախուցեալք ի գերութենէ Գիրիկեանց և ընկալեալք ի բնականան՝ կառուցեայ ի վերջին զշխոյէ: Գնային նորա խառնիխուռն, ջահ յարեղէն ի ձեռնին, զհետ զառաջաւորաց եղերական հանդիսին, կցորդելով ձայնի երիցանւոյն. իսկ Նիխաբեթ լուռ և եթ գնայր յամբարայլ և քօղարկեալ, ի բազմամարտիս անդ ոչ ունելով անդրս ընդ ումք, բայց ընդ այնմ՝ որ ոչ ևս էր: Յիջուցանել զդիակնն ի փոս անդր, եղ երեցն ըստ արարողութեան Յունաց դրամ մի փռքիկ յալ յախճանիցն ի սակ անցի. և արկեալ ի նա ափով հող, ի բաց եկաց: Եւ թաղեցաւ անդ ի յաւերժ մոռացոնս այնն ողորմած, որոյ չէր անցուցեալ օր մի առանց բարեբարելոյ ու մեք. հանգոյն բառեղունչ հողմոց, որ ամենայն ուրեք ամեն սերմանս պիտանիս՝ բուսուցանել յամեն